

ԳԵՂԱՍԱՀՔ

Կանադայում ձմեռային օլիմպիական խաղերի շրջանակներում պետք է անցկացվի գեղասահքի մրցույթ: Ժյուրիի օբյեկտիվությունն ապահովելու համար այս մրցույթի ժամանակ օգտագործվելու է գնահատման հետևյալ համակարգը:

Յուրաքանչյուր մարզիկի ելույթ գնահատվելու է ժյուրիի n անդամների կողմից: Այդ գնահատականները նշանակենք՝ a_1, a_2, \dots, a_n : Վերջնական գնահատականը ստանալու համար գնահատականների վերը նշված ցանկից ջնջվում են ամենամեծը և ամենափոքրը, որից հետո որոշվում է մնացած գնահատականների միջին թվաբանականը:

Ձեր խնդիրն է իրականացնել վերը նշված ալգորիթմը:

Մուտքային տվյալներ

Մուտքի առաջին տողը պարունակում է մեկ ամբողջ թիվ n ($3 \leq n \leq 100$): Երկրորդ տողում տրված են a_1, a_2, \dots, a_n ($1 \leq a_i \leq 10$) թվերը:

Ելքային տվյալներ

Պետք է արտածել խնդրի պատասխանը ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ:

Օրինակներ

N°	stdin	stdout
1	4 1 2 3 4	2.5
2	4 3 3 3 3	3.0